26. 804

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱ-ՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՒՄՍԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՅԵՎ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ

ԿԱՆՈՆՆԵՐ

336
Ռ-11

ՀՐԱՏԱՐԱԿ. ՀՍԽՀ ՊԱԽՊ-Ի ՑԵՎ ՊՎ-Ի ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՑԵՐԿՊՈՒՆ 1935 Թ.

ՀՍԽՀ-ՍՍՀ Ա. Մ. Ա. Мясникян

11.09.2013
26804

Թարգմ. ռուսերենից՝ Գ. ԴԵՎՈՐԳՅԱՆ
Տեխ. խմբագիր յեվ սրբագրիչ՝ Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Քանաքեռչինի տպարան, Յերևան

Գլավլիտ № 309 պատվեր № 6 Տիրաժ 5000

336
Խ-11
05 JAN 2010

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՅԵՎ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ

ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԽՍՀՄ Պետական մասսայական փոխառությունների պարտատոմսերի տնօրինման վրա յեղած հասարակական հսկողությունը, վորը սահմանվել է 1930 թ. հենց իրենց աշխատավորների նախաձեռնությամբ, նպատակ ունի ապահովելու սոցիալիստական շինարարությունը ֆինանսավորելու համար աշխատավորության կողմից իրեն պետությանը փոխառությունների միջոցով տրված վարկի յերկարատևությունը։

Հասարակական հսկողության կենսագործումը դրված է պետվարկին և ինայգործին ոժանդակող հանձնաժողովների վրա նրա համար, վորպեսզի հնարավորություն տրվի աշխատավորությանը վաճառելու կամ գրավ դնելու իրենց պարտատոմսերը խսկական կարիքի դեպքերում։

2. Հասարակական հսկողությունը տարածվում է ԽՍՀՄ բոլոր մասսայական պետական փոխառությունների վրա, վորոնք իրացվում են աշխատավորության մեջ կոլեկտիվ բաժնեգրության կարգով «Հնգամյակը

ասոբ 9476
38243

4 տարում» փոխառությունը, ներառյալ «Ինդուստրացման 3-րդ փոխառությունը», «Հնգամյակի 3-րդ վճռական տարվա», «Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառությունները և «Յերկրորդ հնգամյակի» փոխառությունը։

Հիշյալ փոխառությունների պարտատոմսերը գնվում են խնայդրամարկղների կողմից և նրանց գրավի դիմաց դրամական փոխատվություններ են տրվում միայն համապատասխան ոժհանձնաժողովների թույլտվություններով։

3. Ոժ. հանձնաժողովների կողմից կատարվող հասարակական հսկողության կարևորագույն ֆունկցիան կապված է տասնյակ միլիոն բանվորների, կոլտնտեսականների և աշխատավորների շահերի սպասարկման հետ։ Ոժ. հանձնաժողովները պարտավոր են՝

ա) խստիվ պահպանել պրոլետարական պետության շահերը, ցուցաբերելով հասարակական հսկողության հարցերում բոլշևիկյան սկզբունքայնություն և դասակարգային զգոնություն պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվություն տալու ժամանակ.

բ) առանձնապես ուշադրությամբ մոտենալ պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու մասին պարտատոմսատիրոջ կողմից տրված յուրաքանչյուր առանձին դիմումի լուծմանը, հիշելով ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքները՝ դեպի մարդը հոգատար վերաբերմունք ունենալու մասին։

4. Սույն կանոնները ընդհանրացնում են ոժ. հանձնաժողովների հասարակական հսկողության գործնական աշխատանքների փորձը։ Դրանց նպատակն է ապահովել աշխատավոր պարտատոմսատերերի կողմից տրված պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու դիմումների ավելի ճիշտ և արագ լուծումը, նաև բարձրացնել ոժհանձնաժողովների զգոնությունը՝ հասարակական հսկողությունը կենսագործելու գործում յեղող այլանդակությունների ու չարաշահությունների դեմ մղվող պայքարում։

1. ԻՆՉՆ Է ՀԻՄՔ ԾԱՌԱՅՈՒՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

5. Ոժհանձնաժողովները պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվություններ տալիս են պարտատոմսատերերին բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք կարող են նշանակալից չափով վատթարացնել պարտատոմսատիրոջ նյութական դրությունը։ Այդպիսի հանգամանքներ կարող են համարվել տարերային դժբախտությունները (հրդեհ, ջրհեղեղ և այլն) կամ այնպիսի դեպքեր, ինչպիսիք են պարտատոմսատիրոջ կամ նրա ընտանիքի անդամների մահը, գույքի հափշտակում, ծանր հաշմանդամություն, անասնամահ (կենդանիների կոտորվածք)։

Յուրաքանչյուր առանձին դեպքում ոժհանձնաժողովները պարտավոր են հաշվի առնել թե որքան տվյալ հանգամանքը, որի վրա հիմնվում և պարտատոմսատերը, իսկապես անհրաժեշտ է դարձնում պարտատոմսերի վաճառումը։

6. Ընթացիկ, այսպես կոչված սպառողական կարիքների բավարարումը, ինչպիսիք են՝ բնակվարձի

պարտքի մարումը, հարկերի—պարտքերի վճարումը, փողի կորուստը, հաշվի մեջ սխալվելը, ճանապարհածախսը, շենքի գնումը կամ կապալով վերցնելը, կոշիկների, հագուստի, կահկարասիների և տնային այլ իրերի գնումը, արձակուրդ գնալը—հիմք չեն հանդիսանում պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվություններ տալու համար։

7. Առանձին պարտատոմսատերերի դիմումները քննելիս՝ ոժհանձնաժողովները պարտավոր են հաշվի առնել պարտատոմսատիրոջ վերաբերմունքը դեպի իր աշխատանքը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Արգելվում է պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվություններ տալ կուլակներին և ընտրական իրավունքից զրկված անձանց, ինչպես և կալանքի տեղերում առանձնացված ներին։

8. ԽՍՀՄ-ում ապրող ռուսերկրյա բանվորներին և ծառայողներին իրենց մասսայական փոխառությունների պարտատոմսերը վաճառելու կամ գրավ դնելու թույլտվություններ տրվում են ոժհանձնաժողովների նողմից՝ ԽՍՀՄ-ի աշխատավորների հետ հավասար հիմունքներով։

Արտասահման մեկնելու հետևանքով ռուսերկրյա քաղաքացիներից մասսայական փոխառությունների պարտատոմսերի գնման կարգը սահմանված է ԽՍՀՄ ԺԿ հատուկ կանոններով։

2. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվությունները տրվում են միայն պարտատոմսա-

տիրոջ աշխատանքի տեղի կամ մշտական բնակավայրի ոժհանձնաժողովների կողմից։

10. Պարտատոմսերի վաճառման և գրավ դնելու թույլտվություններ տրվում են՝

ա) Բանվորներին և ծառայողներին—ձեռնարկությունների և հիմնարկությունների գործարկում-տեղկոմիներին կից ոժհանձնաժողովների կողմից, իսկ այն կոլեկտիվների բանվորներին և ծառայողներին, որոնք տեղ իրենց փոքրաթիվ լինելու պատճառով՝ չկան գործարկում-տեղկոմներ թույլտվություններ տրվում են համապատասխան պրոֆմիությունական միավորումներին (խմբկոմներին, բանկոմներին և այլն) կից ոժհանձնաժողովների կողմից։

բ) կոլտնտեսականներին՝ կամ գյուղխորհուրդներին կից ոժհանձնաժողովների կողմից, կամ կոլտնտեսություններին կից ոժհանձնաժողովների կողմից, որոնց շրջոժհանձնաժողովը ավել է այդ իրավունքը։

գ) անկազմակերպ ազգաբնակության և տնայնագործներին—պարտատոմսատիրոջ մշտական բնակավայրի շրջ. (քաղ.) ոժհանձնաժողովների կողմից։

դ) մենատնտես աշխատավորներին—պարտատոմսատիրոջ մշտական բնակավայրի գյուղխորհուրդներին կից ոժհանձնաժողովների կողմից։

11. Ոժհանձնաժողովները քաղաքներում և գյուղական վայրերում պարտավոր են պարտատոմսատերերի կողմից իրենց տրված դիմումները քննության առնել անհապաղ և համենայն դեպս, ոչ ուշ, քան 3—5 որում դիմումը տալու օրից։

12. Պարտատոմսատիրոջ դիմումը քննելիս՝ ոժ-

հանձնաժողովը պարտավոր է նախապես ստուգել պարտատոմսերը խաղարկության աղյուսակներով՝ հնարավոր շահումները հայտնաբերելու համար։

13. Պարտատոմսերի դիմումները քննվում են միայն ոժհանձնաժողովների նիստերում։ Արգելվում է հարցը լուծել առանց ոժհանձնաժողովի նիստի, միայն նախագահի, քարտուղարի, կամ հանձնաժողովի մյուս անդամների միջոցով։

Թույլտվություն տալու վորոշումը ընդունվում է ձայների մեծամասնությամբ։

14. Պարտատոմսատիրոջ դիմումը ըստ էության քննելու համար, ոժհանձնաժողովը, անհրաժեշտ դեպքերում, կարող է ստացված դիմումը հանձնել հասարակական հրահանգչին, կամ մի այլ ակտիվիստի, պարտատոմսատիրոջ կարիքի չափը ավելի ուշադիր կերպով հետազոտելու և վորոշելու համար։

15. Նիստում ընդունված վորոշումը հակիրճ պատճառաբանությամբ գրանցվում և ոժհանձնաժողովի նիստերի հատուկ արձանագրություններում։ Նիստերի արձանագրությունները համարակալվում և ստորագրվում են նախագահի, քարտուղարի և նիստին ներկա գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների կողմից։ Նիստի արձանագրություններին պետք է կցված լինեն այն բոլոր փաստաթղթերը, վորոնք հիմք են ծառայել պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվություն տալու համար։

16. Վոչ ուշ, քան նիստի հետևյալ օրը, հանձնաժողովի քարտուղարը նիստի արձանագրությունների քաղվածքները հանձնում է պարտատոմսատերերին։

Թույլատրված դիմումների քաղվածքները տրվում

են սահմանված ձևով և համապատասխան բլանկների վրա։ Մերժված դիմումների քաղվածքները տրվում են միայն պարտատոմսատիրոջ պահանջով։

Քաղվածքները պետք է վավերացված լինեն ոժհանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և կնիքով, իսկ այն դեպքում յերբ հանձնաժողովը չունի իր կնիքը—ապա գործարկոմտեղկոմի, կոլտնտեսության, գյուղխորհրդի կամ գործկոմի կնիքով—ըստ պատկանելության։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Քաղվածքները չեն կարող վավերացվել խնայդրամարկղների աշխատակիցների կողմից այն դեպքերում, յերբ նրանք ոժհանձնաժողովների քարտուղարներն են հանդիսանում։ Այդ դեպքերում, ոժհանձնաժողովի հատուկ վորոշումով, քաղվածքների վավերացումը պետք է հանձված լինի ոժհանձնաժողովի անդամներից այնպիսի մեկին, վորը խնայդրամարկղի աշխատակից չէ։

17. Ոժհանձնաժողովների թույլտվությունները ընդունվում են համապատասխան խնայդրամարկղների կողմից ի կատարումն՝ քաղաքներում—10 որվա ընթացքում թույլտվությունը տալու օրից, իսկ գյուղական վայրերում—30 որվա ընթացքում։ Մատնանշված ժամկետների անցկացումը վոչնչացնում է տրված թույլտվությունների ուժը։

3. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվություն տալու իրավունք ունեցող ամեն մի ոժհանձնաժողով կցվում է միայն մի խնայդրամարկղի՝ համաձայն շրջ. (քաղ.) ոժհանձնաժողովի ցուցմունքի։

Ոժհանձնաժողովը պարտավոր է սահմանված

քարտերով հաղորդել այդ խնայդրամարկղին իր ճիշտ հասցեն, ձեռնարկության անվանումը, արձանագրությունների քաղվածքները վավերացնող ոժհանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնը, ազգանունը, անունը և հայրանունը, նաև նրանց ստորագրությունների և կնիքի նմուշները, որոնցով պետք է հաստատվեն քաղվածքները։ Այդ տեղեկությունները պետք է վավերացված լինեն գործարկում-տեղեկումների կոլտնտեսությունների, խորհուրդների կողմից՝ ըստ պատկանելության։

19. Խնայդրամարկղը կցված ոժհանձնաժողովին մացնում է հատուկ քարտում—«ոժհանձնաժողովի հսկիչ քարտ»-ում, հաշվացնում է հերթական համար և հաղորդում է այդ մասին իրեն—ոժհանձնաժողովին։ Խնայդրամարկղները իրավունք չունեն թույլտվություններ ընդունելու կատարման համար այնպիսի ոժհանձնաժողովներից, որոնք կցված չեն իրենց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վաճառման և գրավի հարցերով խնայդրամարկղի հետ ունեցած բոլոր հարաբերությունների ժամանակ, ոժհանձնաժողովը պարտավոր է հիմնվել իրեն հաշվացրած հերթական համարի վրա։

20. Ոժհանձնաժողովների արձանագրություններից հանված քաղվածքները, որոնք պարտատոմսերի վաճառման կամ գրավ դնելու թույլտվություններ են հանդիսանում, կազմվում են հատկապես սահմանված ձևի քարտերի վրա (տես հավելվածը)։

Թույլտվության յուրաքանչյուր քարտի վրա, բացի նրա վրա յեղող ապագրական համարից, գրվում է նաև տարվա սկզբից սկսած ոժհանձնաժողովի թույլտվության քաղվածքի հերթական համարը։

Այն քարտերը, որոնց վրա ձևակերպվում են պարտատոմսերի վաճառման և գրավ դնելու թույլտվությունները, պատրաստվում են խնայդրամարկղների յերկրային (մարզային) վարչությունների կողմից ամբողջ մարզի համար։ Խնայդրամարկղները պահում են այդ քարտերը, որպես խիստ հաշվառման փաստաթղթեր և տալիս են իրենց կցված ոժհանձնաժողովներին ըստ քաղ. (շրջ) ոժհանձնաժողովի ցուցումների։

21. Ամեն յեռամսյակում խնայդրամարկղները քաղ. (շրջ) ոժհանձնաժողովների ներկայացուցիչների հետ միասին համեմատում են ստացված և ի կատարումն ընդունված պարտատոմսերի վաճառման և գրավ դնելու թույլտվությունները՝ ոժհանձնաժողովների նիստերի արձանագրությունների համապատասխան գրանցումների հետ։

Այն դեպքում, յեթե տվյալ ոժհանձնաժողովում նկատվում է վորևե թերություն կամ մեղսագործություն թույլտվություններ տալու և ձևակերպելու մեջ քաղ. (շրջ.) ոժհանձնաժողովը վորոշ ժամանակով կարող է զրկել այդպիսի ոժհանձնաժողովի թույլտվություններ տալու իրավունքից։

22. Ոժհանձնաժողովների նիստերի արձանագրությունների քաղվածքները հանդիսանում են, որպես պաշտոնական փաստաթղթեր, որոնց հիման վրա խնայդրամարկղները կատարում են պարտատոմսերի դնումն կամ փոխատվություն են տալիս նրանց գրավի դիմաց միայն այն դեպքերում, յերբ այդպիսիք համապատասխանում են ներկա կանոններին։ Մասնավորապես՝

ա) յեթե քաղվածքները տրված են սահմանված ձևով և համապատասխան քարտի վրա.

բ) յեթե ոժհանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրությունները, նաև կնիքը համապատասխանում են խնայդրամարկղում յեղած նմուշներին.

գ) յեթե արձանագրությունների քաղվածքների (թույլտվությունների) ժամկետը չի անցել։

4. ՎԱՃԱՌՄԱՆ ՅԵՎ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

23. Ոժհանձնաժողովը քննելով պարտատոմսատիրոջ դիմումը և գտնելով, որ հնարավոր է բավարարել նրա խնդիրը, թույլատրում է պարտատոմսերի վաճառումը։ Այն դեպքերում, յերբ պարտատոմսատերը ցանկություն և հայտնում իրեն վերապահել իրեն պատկանող պարտատոմսերի իրավունքը, ապա պարտատոմսատիրոջը կարելի յե թույլատրել պարտատոմսերի գրավ դնելը (պարտատոմսերի անվանական արժեքի մինչև 60%-ը)։

24. Պարտատոմսերը գրավ դնելու թույլտվություններ տալիս՝ ոժհանձնաժողովները վորոշում են գրավի ժամկետը, վորը մեկ տարուց ավել չպետք է լինի։ Գրավի ժամկետը և փոխատվության մարման վճարումների չափը վորոշվում է ոժհանձնաժողովի կողմից յուրաքանչյուր առանձին դեպքում։ Խնայդրամարկղը պարտատոմսերը գրավ դնելու թույլտվությունն ընդունելիս պետք է, մինչ փոխատվությունը պարտատոմսատիրոջը հանձնելը, վերցնի նրանից ստորագրություն (պարտավորագիր) այն մասին, որ նա պարտավորվում է մարել փոխատվությունն ու նրա տոկոսները այն կարգով և այն ժամանակամիջոցում, վորպիսին վորոշվել է թույլտվություն տվող ոժհանձ-

նաժողովի կողմից։ Փոխատվությունը մարում է ինքը պարտատոմսատերը անմիջականորեն այն խնայդրամարկղում, վորը տվել է փոխատվությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Պարտատոմսերը գրավ դնելու ոժհանձնաժողովների թույլտվություններն ընդունվում են ի կատարումն միայն այն շրջ. (քաղ) խնայդրամարկղների կամ խնայդրամարկղների բաժանմունքների կողմից, վորոնց իրավունք է վերապահված կատարելու գրավային գործարքներ։

25. Պարտատոմսերը գրավ դնելու թույլտվություններ տվող ոժհանձնաժողովները պարտավոր են հսկելու այն բանի վրա, վորպեսզի փոխատվություն ստացող պարտատոմսատերերը ժամանակին և լրիվ չափով մարեն փոխատվությունը։ Այդ նպատակով ոժհանձնաժողովները պետք է սերտ կապ հաստատեն փոխատվություն տվող խնայդրամարկղի հետ։

5. ՈԺՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

26. Պարտատոմսատերը ոժհանձնաժողովի վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում՝ կարող է բողոքարկել այդ վորոշումը՝ ձեռնարկությունների և հիմնարկությունների ոժհանձնաժողովների վորոշումները իրենց գործարկոմ-տեղկոմներին 10 որվա ընթացքում, կոլտնտեսության կից ոժհանձնաժողովի վորոշում—գյուղխորհրդին 30 որվա ընթացքում՝ վորոշման որից։ Գյուղխորհրդին կից ոժհանձնաժողովի վորոշումը—գյուղխորհրդի նախագահության։ Գործարկոմ-տեղկոմի և գյուղխորհրդի վորոշումները պարտատոմսատերերի բողոքի մասին՝ վերջնական են և յենթակա չեն հետագա բողոքարկման։

Քաղ. (շրջ) ոժհանձնաժողովների վորոշումները

այն դիմումների մասին, որպիսիք նրանք քննության են առնում որպես առանձին ինստանցիա ըստ եյության (անկազմակերպ ազգաբնակության և տնայնագործների դիմումները) կարող են բողոքարկվել քաղ. (շրջ) խորհրդի կամ շրջգործկոմի նախագահության։

27. Խնայդրամարկղները պարտատոմսերը գնում են և նրանց գրավի դիմաց փոխատվություն են տալիս միայն ստորին ոժհանձնաժողովների կամ քաղ. (շրջ) ոժհանձնաժողովների կողմից անմիջականորեն տրված թույլտվություններով, որոնց դիմումները վերջիններս քննության են առնում անմիջականորեն։

Կտրուկ կերպով արգելվում է խնայդրամարկղներին փոխատվություն տալ և պարտատոմսեր գնել ուրիշ որևե կազմակերպությունների թույլտվություններով, նաև՝ գործարկոմ-տեղկոմների, գյուղխորհուրդների քաղ. (շրջ) ոժհանձնաժողովների թույլտվություններով, որ տրվել են ստորին ոժհանձնաժողովների որոշումը բեկանելու կարգով։

Այդ դեպքերում, յերբ գործարկոմ-տեղկոմները, գյուղխորհուրդները, քաղ. (շրջ) ոժհանձնաժողովները և շրջգործկոմները բեկանում են ստորին ոժհանձնաժողովների որոշումները, վերջիններս պարտավոր են ձևակերպել նոր որոշումներ՝ ներկա կանոնների 13—16 կետերում սահմանված կարգով։

28. Համապատասխան գործկոմները, գյուղխորհուրդները և վերադաս ոժհանձնաժողովները իրավունք ունեն, ստորին ոժհանձնաժողովների աշխատանքների հսկողության կարգով, դադարեցնել և բեկանել նրանց վճիռները։

6. ՀՐԱՀԱՆԳՈՒՄ ՅԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

29. Մասսայական փոխառությունների պարտատոմսերի տնորինության վրա հասարակական հսկողու-

թյունն ավելի հիշտ կերպով կենսագործելու նպատակով, ղեկավար ոժհանձնաժողովները պետք է ապահովեն թույլտվություններ տալու իրավունքով ոգտվող ոժհանձնաժողովների սիստեմատիկ հրահանգումը, նաև այդ ոժհանձնաժողովների աշխատանքների մշտական վերահսկողությունը։

30. Այն խնայդրամարկղները, որոնց կցված են ոժհանձնաժողովները, պարտավոր են հրահանգել յուրաքանչյուր կցված ոժհանձնաժողովին և ցույց տալ նրանց, նաև՝ հասարակական հրահանգիչներին տեխնիկական ոգնություն այն ժամանակ, յերբ հասարակական հրահանգիչներն անց են կացնում ոժհանձնաժողովների աշխատանքների վերահսկողություն։

31. Խնայդրամարկղները տանում են իրենց կցված ոժհանձնաժողովների թույլտվությունների հաշվառում և ամեն ամիս ամփոփ տեղեկագիր են ներկայացնում շրջ. (քաղ) ոժհանձնաժողովներին յուրաքանչյուր ստորին ոժհանձնաժողովի կողմից տրված թույլտվությունների քանակի և վաճառված ու գրավ դրված պարտատոմսերի գումարի մասին։

Շրջանային և քաղաքային ոժհանձնաժողովները հասարակական հրահանգիչների կամ ոժհանձնաժողովների անդամների միջոցով հետաքրքրում են ստորին ոժհանձնաժողովների հասարակական հսկողության գործունեությունը և անհրաժեշտ միջոցներ են ձեռք առնում ոժհանձնաժողովների այդ աշխատանքների սխալները վերացնելու համար։

32. Գործկոմներին և գյուղխորհուրդներին կից ոժհանձնաժողովները պարտավոր են՝

ա) վոչ պակաս, քան 6 ամիսը մեկ անդամ անց-

կացնել հասարակական հսկողություն կենսագործող ոժհանձնաժողովների հրահանգչական ժողովներ.

բ) կանոնավոր լսել ստորին ոժհանձնաժողովներին՝ հասարակական հսկողության դրվածքի մասին և տարվա ընթացքում ստուգել տեղում յուրաքանչյուր ոժհանձնաժողով մեկ անգամից վոչ պակաս։

33. Շրջանային և քաղաքային ոժհանձնաժողովները պարտավոր են 6 ամիսը մեկ անգամից վոչ պակաս ստուգելու ոժհանձնաժողովների թույլտվություններով գնված պարտատոմսերի և տրված փոխատվությունների աշխատանքները, վորպիսիք կատարել են խնայդրամարկղները։

Ներկա կանոնները ուժի մեջ են մտնում 1935 թ. սեպտեմբերի 1-ից։ ԽՍՀՄ ԿԳԿ-ին կից պետվարկին և խնայգործին ոժանդակող կենտրոնական հանձնաժողովի և ԽՍՀՄ Ֆինժողկոմատի 1930 թ. փետրվարի 22-ի և մարտի 8-ի հրահանգները, նաև այն բոլոր կարգադրությունները, հրահանգները և կանոնները, վորոնք հրատարակվել են կենտրոնում և տեղերում ի զարգացումն մատնանշված հրահանգների վերացվում են նույն ժամկետից։

ԽՍՀՄ ԿԳԿ նախագահության կից պետվարկին և խնայգործին ոժանդակող կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝ Ս. ԶՈՒՑԿԱՑԵՎ

ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարի տեղակալ՝ Ի. ԼԵՎԻՆ

Համաձայնեցված է ՀԱՄԿԽ-ի հետ՝

ՀԱՄԿԽ-ի քարտուղար՝ Ա. ԱԲՈԼԻՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0208208